Զ.

Հա՛յ իմ աղաւնի պայծառ, որ թեւիդ թեպիկն է հազար,
Երկինք ու գետինք վըկա՛յ, եմ սիրեր ու չեմ մոռանար.
Կուգան ու կուտան հազար, չեմ առնուր ու զքեզ չեմ ի տար:

Է.

Երեսդ է կարմիր ու լան, ի վարդին տերեւն ի նըման.
Պօլիկդ է բարակ ’ւ երկան,ի շամպայ եղէգն ի նըման.
Թուխ աչե՛ր, զուգուած՝ շարով. մի՛ ձըգեր վըզիդ մանէման.
Մի՛ գար մեր դըռնովն անցնիր, մի՛ ձըգեր իմ սիրտըս կուման.
Դու ինձ խօսքիկ մի ասիր, ես տարտէդ եղայ սարկատան:

Ը.

Քո սէրդ իմ սըրտիս միջին հանց մըտեր զէտ ոսկի բեւեռ,
Գնացեր է սըրտիկս ի ներս ու փառչին եղեր կեռումեռ.
Քո տեսդ իմ սըրտիս միջին հերկ արեր ու դարձեր է եռ:

Թ.

Սիրել պիտի զայն աղուորն որ դընդիկն է կարագ ու մեղր,
Բերնիկն է շաքրի սովոր ’ւ երեսիկն է պագնելու տեղ:

Ժ.

Հա՛յ իմ մահալի մորճուկ, մեր աղբիւրն ի ջուր ես եկեր.
Լուսինըն ի քո ծոցէն աղբըրին ի յակն է ցաթեր.
Երնէկ ես անոր կուտամ որ գիշերն ի ծոցդ է պառկեր,
Գըրկիկ կուռ միջացդ ածեր ու զբերնիդ բոլորն է պագեր:

ԺԱ.

Կօզա՛լ, քեզ բանիկ մ’ասեմ, քո ահուդ չեմ իշխեր ասել.
Անոր համար չեմ ասեր՝ դուք հարուստ էք ու մեք տառպել.
–Ծօ՛, ասա՛ եւ մի՛ վախեր, շատ հարուստ է տառապելացել,
Անչափ հարըստի դըստրիկ տառպելի ծոցիկ է պառ կել:

ԺԲ.

Ամէն քար ի յիր տեղին է ամուր, ’ւ ես եմ գըլորեր.
Երնեկ ես անոր կուտամ որ ո՛չ հոգ ունի ո՛չ երեր.
Դուն ալ սիրու տէր լինի՛ս, լօք ընկնի՛ս ի հոգ ’ւ ի երեր.
Ամէն օր ինձ հետ հաշտ ’իր, ու այսօր ի՞նչ ես խըռովեր: